Հայտարարություն

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը ղեկավարվելով ՀՀ ԿԳՄՍ նախարարի 2020թ. դեկտեմբերի 24-ի թիվ 48-Ն հրամանով հաստատված կարգի դրույթներով, հայտարարում է միջին մասնագիտական կրթական ծրագրերի **Քաղաքագիտության և սոցիոլոգիայի** մասնագիտական մոդուլներ և առարկաներ դասավանդող դասախոսների թափուր հաստիքների մրցույթ:

Դասավանդվող առարկաներ

Մասնագիտական առարկաները կամ մոդուլները	**Ժամերը**
Քաղաքագիտության և սոցիոլոգիայի հիմունքներ	984

Պետական կրթական չափորոշիչով դասավանդողին ներկայացվող պահանջներ՝ բարձրագույն կրթության «Քաղաքագիտություն» կամ «Սոցիոլոգիա» մասնագիտություններով քաղաքագիտության կամ սոցիոլոգիայի մագիստրոսի կամ բակալավրի որակավորում[1]:

[1] ՀՀ կառավարության 2014 թվականի հոկտեմբերի 23-ի N 1191-Ն որոշումից հետո, 2018 թվականից սկսած, ՀՀ բուհերի շրջանավարտների համար: ՀՀ կառավարության 1997 թվականի մայիսի 29-ի N 154 որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2003 թվականը ներառյալ, 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1933-Ն որոշման որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2011 թվականը ներառյալ, 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1038-Ն որոշման գործողության ժամկետում ՀՀ բուհերի շրջանավարտների համար՝ մինչև 2017 թվականը ներառյալ:

Մրցույթին մասնակցելու համար հավակնորդները հայտարարության մեջ նշված ժամկետում համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին են ներկայացնում հետևյալ փաստաթղթերը՝

1. դիմում (լրացվում է տեղում),
2. կրթության մասին հավաստող փաստաթուղթ (դիպլոմ) (բնօրինակը և պատճենը),
3. անձը հավաստող փաստաթուղթ (բնօրինակը և պատճենը),
4. աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք (առկայության դեպքում),
5. ինքնակենսագրություն (Ձև 4),
6. մեկ լուսանկար՝ 3*4 չափի,
7. այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ, բացառությամբ՝ ՀՀ համապատասխան միջազգային պայմանագրերի ուժով աշխատանքի թույլտվություն ստանալու պահանջից ազատված օտարերկրացիների,
8. ՀՀ արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ (բնօրինակը և պատճենը),
9. հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը և/կամ գիտական աստիճանը հավաստող փաստաթղթեր (դրանց առկայության դեպքում):

Փաստաթղթերն ընդունվում են 2022 թվականի օգոստոսի 01-ից 2022թվականի օգոստոսի 12-ը ներառյալ, բացի շաբաթ և կիրակի օրերից, ժամը 10:00-ից 16:00-ը:

Փաստաթղթերն անհրաժեշտ է ներկայացնել համալսարանի մարդկային ռեսուրսների կառավարման բաժին՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք, 4-րդ հարկ, 401 աշխատասենյակ:

Մրցույթը տեղի կունենա 25.08.2022թվականին, ժամը 11:00-ին, հասցե՝ ք.Երևան, Նալբանդյան 128, ՀՊՏՀ կենտրոնական մասնաշենք: